118 Երբ սերս պաղել էր, ու բեռս ծանր էր,

1. Երբ սերս պաղել էր, ու բեռս ծանր էր,
Մեղքի խավարում էի կապվել,
Իմ մեղքերով եկա, Խաչյալի ոտքն ընկա,
Եվ այնտեղից էլ վրաս լույս ծագեց:

Խաչի մոտ (2)
Ծագեց լույս առավոտ,
Ես գտա մեղքերիս
Թողություն: (2)
Օհ, ի՜նչ քաղցր նայվածք,
Կյանք է ինձ պարգևված.
Արդ Քեզանով է իմ բերկրություն:

2. Երբ հոգով կույր էի, ինձ անմեղ կարծեցի,
Չէի վախենում մահվան գետից,
Եկա այն ժամանակ, Խաչյալի ոտքն ընկա
Եվ այնտեղ փրկվեցի խավարից:

3. Արդ խավարն անցել է, սուրբ արև ծագել է,
Ես հիմա տեսնում եմ իմ Փրկչին,
Քեզ եմ նայում, Հիսո՛ւս, Դու տուր ինձ կյանք և լույս,
Խաչի մոտ կյանք գտավ իմ հոգին: